

ՀՆՁՍԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՆԵՐՎԱՆ

(ՅՈՂՈՒԱԾ ՀՈՐՐՈՐԴ ՆԸ ՎԵՐՋԻՆ.)

Հատ վեր զանազան կուսակցութիւնների երկ-
պառակութիւնների ու վէճերի կրքոտ աղմուկներից,
բոլորովին օտար ցած դաւերի ու նպատակների
թաքուն նկրտումներին ու ամենօրեայ մեքենայու-
թիւններին, անմատչելի սաւառներով արիւնահեղ
արհաւիրքների և քաղաքականութիւնների լաբիւ-
րինթոսի հակասական ու թշնամական հաշիւների
գլխով, և բարձր՝ անհատի թէ սիրուց և թէ
յարձակումից — Յեղափոխութեան Վաղափարը,
ինքը պատմական ծնունդ կեանքի նիւթական պայ-
մանների, աճեցաւ, զօրեղացաւ և վստահ՝ սպա-
սում է իր յաղթանակին: Հատ փոխեցան գործ-
նական կուռ պարագաներն ու պայմանները, շատ
դէպքեր զլորեցան միմեանց ետեւից, մերթ դա-
հաւիժեցով իրանց հետ ամենափառ յոյսերը և
մերթ նոր ոյժ տալով մտքի ու երազի թռիչին,
շատ աղէտներ, կարծես անակնկալներ, մինչդեռ
այնքան բնական ազատութեան ու բռնութեան մե-
նամարտի միջոցին, զարնեցան տկարների գլխին —
բայց Հայկական Վատը, հայութեան ազատման
խնդիրը, իբրեւ պատմական մէկ անհրաժեշտ և իր
իրականացումը պահանջող բնական երևոյթ, այս
վերջին տասը տարւայ ընթացքում գնալով՝ դար-
ձաւ ընդհանուր եւրօպական մի խնդիր, Արեւելքի
խաղաղման մի մեծ պայման, որ անհրաժեշտ է
դարձրել իր լուծման պահանջը: Իբրեւ պատմա-
կան մի երևոյթ և առաջացած հայկական իրակա-
նութեան իմաստից ու հայութեան զարգացման
պահանջից՝ Յեղափոխական Վաղափարը և Յեղա-
փոխութիւնը չէին կարող լինել և չէին անհատի
մտքի և կամ անհատի գործնական աշխատանքի
արդիւնք: Անհատ յեղափոխականը և կամ յեղա-
փոխական մի կուսակցութիւն չեն կարող արուես-
տական կերպով յեղափոխական գաղափար ու գոր-
ծունէութիւն առաջացնել իրանց ուղածին պէս
և իրանց ուղեղի հնարած մեթոդներով ու նա-
խադրերով: Մեթոդներն ու նախադրերը ենթարկ-
ւած են արտաքին ու ներքին իրականութեան բազ-
մատեսակ ու հակասական հանգամանքներին: Յե-

ղափոխական կուսակցութիւնն, ունենալով իր ընդ-
հանուր ծրագիրն՝ իբրեւ արտայայտութիւն պատ-
մական յայտնի շրջանի ձգտումների, իր գործու-
նէութեան մեթոդներն ու ընթացքը պէտք է այն
շրջապատող հանգամանքների համաձայն ձև ու
նշանակութիւն ստանան, որպէսզի նպատակայար-
մար հանդիսանան: Յեղափոխական ծրագիրը,
իբրեւ ծնունդ յեղափոխական Վաղափարի, ներկա-
յացնում է յեղափոխականների գիտակցութիւնն
ու նրա չափը: Այդպիսով յեղափոխական կուսակ-
ցութեան դերն է՝ այդ գիտակցութիւնը գործնա-
կան հողի վրայ դնել յայտնի ընթացքով, որը,
չը շեղելով հանդերձ իր ծնող Վաղափարի ի-
մաստից, ընտրում է համապատասխանութիւն իր
և իրան շրջապատող պայմանների միջև: Այսպէս,
Յեղափոխութիւն անելն արուեստ չէ և ոչ էլ յե-
ղափոխականն այդ արուեստի տէրը: Յեղափոխու-
թիւն անելը կայանում է յայտնի գիտակցութեան
մէջ և յեղափոխականն էլ կամ յեղափոխական
կուսակցութիւնն այդ գիտակցութեան տէրն է, որը
գործնականի վերածելով իր գիտակցութիւնը,
յայտնում է նեցուկ ու մղիչ Յեղափոխութեան՝
դէպի իրագործում: Արդյապէս ըմբռնած շրջապա-
տող թէ նիւթական և թէ հասարակական ու քա-
ղաքական հանգամանքների ու պայմանների իմաստն
ու տեսակը, ըմբռնած՝ թէ այդ պայմանների ներ-
կայութեանն ինչպէս կարող է և պէտք է լինի
յեղափոխական շարժումը — գիտակցական յե-
ղափոխականը կամ յեղափոխական կուսակցու-
թիւնն իր ոյժերն ու ջանքերը միախառնում է այդ
շարժման հետ և տալիս է նրան այն զարկը, որը
օգնում է նրա բնական աճեցման ու ընթացքին
դէպի իրագործում: Այդտեղից ըստ ինքեան ա-
ռաջ է գալիս մի հետեւութիւն, որի գիտակցու-
թիւնը հայ յեղափոխականներն առհասարակ բո-
լորովին չունեն: Վա այն է, որ յեղափոխական
կուսակցութիւնը պէտք է որոշ գիտակցութիւն
ունենայ Յեղափոխութեան ներքին իմաստի, նրա
ընդունելիք ընթացքի մասին առհասարակ և մաս-
նաւորապէս որոշ հանգամանքների ու պայմանների
միջոցին, որպէս նաև նրա առջև եղած ամեն տեսակ
խոչնդոտների ու դժւարութիւնների մասին, որոնք
առաջանում են դէպքերի ու քաղաքականութիւն-
ների հակադրելի բարդութիւնների շնորհով:

Մեր յօդաձի նախորդ գլխում առաջինը, թէ յեղափոխական Վաղափարը դարձել է հայ ժողովրդի միսն ու արիւնը, մտածելու ու զգալու միակ եղանակը: Վրանով հասկանում ենք, թէ մեր ժողովրդի մէջ ստեղծւել է մի յեղափոխական ոգի ու տրամադրութիւն, թէ նա այնպէս է զգացել և այնպէս է մտածում, որ իր ներկայ սոսկալի վիճակից դուրս գալու ուրիշ միջոց չէ ցոյց տալիս նրա կեանքը, եթէ ոչ միայն Յեղափոխութիւնը: Այլ ժողովրդի այդ տրամադրութիւնն այնքան խիստ, այնքան բացարձակ կերպով էր իրան զգացնել տալիս, որ ի վերջոյ յեղափոխական Վաղափարը դարձաւ մի-տեսակ քաղաքական մօդա, որին չը հետևողը համարւում էր վախկոտ, անտարբեր, խաւարամիտ: Այն ակնածութիւնն ու հեղինակութիւնը, որ ազգային ամեն խաւերում յեղափոխական Վաղափարը ներշնչեց դէպի իրան, առաջացրեց այնպիսի երևոյթ, որ ամեն շառւառան, ամեն ուրացող, ամեն բախտախնդիր սկսաւ առերես երկրպագել ու խնկարկել նրան, ձիարշաւով ընկած փառքի, անւան և կամ անխոստովանելի խաղերի ետեւից: Վրանով է բացատրւում այն, որ ազգային հրապարակի վրայ, յեղափոխական շարքերում սպրդեցան ամեն բնութեան, գոյնի ու տեսակի մարդիկ, որոնք իրանց անձերով սկսան ծանրաբեռնել յեղափոխական ասպարէզը, առաջացնել շարունակ ներքին զանազան խոչնդոտներ և ծնունդ տալ «գործելու» այնպիսի եղանակների ու բարքերի յեղափոխականների մէջ, որ պատճառներ առաջացան յեղափոխական այլ և այլ անաջողութեան և ժամանակ առ ժամանակ յեղափոխական Վաղափարի արեգակի խաւարման: Յեղափոխութեան վրայ այդպիսիները նայում են իբրև առևտրական կամ որ և է պարզ մասնաւոր ընկերութեան կամ արուեստի մի ձեռնարկի վրայ, որը կարող են, երբ այդ իրանք հարկ տեսնեն, կամ երբ իրանց յաղթած ու նեղն ընկած զգան, ծախել աւելի գորւաւորին — բէյերին, փաշաներին, սուլթանին իրան: Այսպէս, Յեղափոխութեան ամբիօնի շուրջը կուտակեցան անթիւ օտարակերներ, պարապետներ, մօդայի, ձեւականութեան ու Փրազաբանութեան ստրուկներ, չարչիութեան, բիւրօկրատական ու գրագրային մրկներ ու ցեցեր, բերելով իրանց հետ իրանց յատուկ բարքերը, հայեացքներն ու սովորութիւնները, որոնք բոլորն ապականութեան տիղմի արգիւններ են: Յեղափոխական գործում ամբոխի տարուբերումները, դիւրահաւատութիւնը, փոփոխամտութիւնը, դիւրագրգռութիւնը ևս աւելի նպաստեցին այդ տարրերի գոյութեան ու տարածման, տարրերի, որոնք զարմանալի ճարպիկութեամբ կարողացան օգտւել — թէ անխոստովանելի և թէ կուսակցական տեսակէտերից — ամբոխի այդ փոփոխող

տրամադրութիւններից: Այդպիսի տարօրինակ երևոյթներն են, որ անհրաժեշտ են դարձնում ժամանակ առ ժամանակ մարակ վերցնելը՝ Յեղափոխութեան սուրբ տաճարից վռնաւելու ապականւած տարրերին, որոնք կուտակւում են իբրև խոչնդոտներ յեղափոխական գործի ընթացքի առաջ:

Յեղափոխական կուսակցութիւնը պէտք է լինի մի մարմին, որ բոլորովին որոշ ու սխտէմական ըմբռնումն ու գիտակցութիւն ունի Յեղափոխութեան ու նրա Վաղափարի մասին, որոնց իմաստի համաձայն էլ գործունէութիւն է առաջացնում: Յեղափոխական կուսակցութիւնը միայն այդ գիտակցութեան ներկայացուցիչ ու գործնական գործադրող է և նա չէ կարող լինել ճանապարհ զանազան անձնական ամբիւցիտ, փառքեր, դիրքեր ու շահեր ձեռք բերելու համար: Վրանք, որոնք այդպիսի նկրտումներ ունեն, շատ դիւրութեամբ հակամէտ լինելով իրանց չափով չափել ուրիշներին էլ՝ որոնք բնաւ իրանց նման չեն, սկսում են իրանց նկրտումների առջև արդելք դնողին ու Յեղափոխութեանը գիտակցական ծառայողին մեղադրել բռնութեան, ավտօրիտէտութեան, եսամոլութեան, միապետական ձգտումների մէջ: Անտարակոյս, ե՛նչ անեն թշուառականները, քանի որ նրանց ասպարէզ չէ տրւում և արդելք է դրւում՝ նրանց սեփական միապետութիւնը, բռնութիւնը, եսամոլութիւնը հաստատելու ու գործածելու...

Արեւք և մանաւանդ այսօր պէտք է Փրազաբանութեան ինքնախաբէութեամբ պարապել և պէտք չէ երկչոտաբար խուսափել խոստովանելուց, որ այդ քստմնելի ու անբարոյականացած տեսարանն է ներկայացնում այժմ հայ հայրենասիրական ու յեղափոխական ասպարէզը: Այլ այդպիսի պարաբաներում հնարաւոր չէ խելք հասկացնել ու համոզել կրքոտ զգացումներին, կուրացած մտքերին, ներքին հաշիւներ ունեցող քննախնայներին և ամեն գոյնի ու ամեն տեսակի անսանձ ամբիցիօնիստներին: Պէտք է թողնել ժամանակն անի իր գործըն ու խօսքը խելքերի վրայ:

Աւրօպական քաղաքականութեան ներկայ հանդամանքները և նրա բռնած դիրքը դէպի Հայկական Վատը, որպէս և այս վերջինի նոր վիճակն ու պայմանները և հայոց ազգային ու յեղափոխական ներկայ ասպարէզի վիճակը, — այդ բոլորը միասին խիստ բարդ կերպով են առաջ դնում հայ յեղափոխական գործի յետագայ անելիքն ու բռնելիք ընթացքը: Անշուշտ, տղայական մտքերի ծնունդ ձեռնարկները չեն և ոչ ֆանտաստիկական, զառանցական ու չը մտածւած հնարքներն ու նախադէբերը, որոնք կարող կը լինեն դարման հանդիսանալ այդ նորաստեղծ վիճակներին: Արկնում ենք, Յեղափոխութիւնն արուեստ չէ և ոչ էլ յեղափոխականն՝

այդ արուեստը կատարողը, որն, ինչպէս արհեստանոցում, յեղափոխական շարժումներ ունենալու հետամուտ լինի: Յեղափոխութիւնը, ժողովրդի նիւթական կեանքի բազմատեսակ երևոյթներից առաջացած լինելով և գտնւելով արտաքին քաղաքական ու ազգային յայտնի հանդամանքներում, պահանջում է պարզորոշ ու ձիշդ գիտակցութիւն իր մասին, և, ուրեմն, յեղափոխական կուսակցութիւնը պէտք է հանդիսանայ այդ գիտակցութեան տէրն ու արտայայտիչը: Այն անձերը, որոնք կանգնած են այդ գիտակցութեան բարձրութեան վրայ, պէտք է կապմուն ու ներկայանան այն մարմինը, որը նպատակայարմար ու ժամանակայարմար եղանակներով, միշտ հաւատարիմ Յեղափոխութեան պատմական իմաստին — ըստ որում Յեղափոխութիւնը տարբեր ընթացք է կարող ունենալ, — առաջ կը մղէ յեղափոխական դործը, նեցուկ ու ղեկավար լինելով հայ ժողովրդային յեղափոխական տարրերին: Եւ այդպիսի մի մարմին, իր շուրջը ժողովելով ու միացնելով յեղափոխական անկեղծ ոյժերին, կը շարունակէ լրացնել այն պատմական մեծ գերը, որի արդիւնքը, հակառակ ամեն դժարութիւնների, խոչնդոտների ու արհաւիրքների, պէտք է լինի հայ ժողովրդի ազատման իրականացումը:

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ.

15 Յունիս 1897

Բանակցութիւններ, բանակցութիւններ և դարձեալ բանակցութիւններ... Այլ աւելի ի՞նչ կուզէք: Նպատակն մեծ է եղեր, խաղաղութիւնը կուզեն եղեր հաստատել թիւրքին և Զոյնին մէջ: Այնքա՛ն թեանց ղեսպանները և թէվֆիք փաշան գրեթէ ամեն օր ժողովներ ունեն սե անուշ դահլիճին մանրիկ ֆինձաններու շուրջը և ամենանուրբ ծխախոտին հոտաւետ ծուխի ամպերուն մէջ: Բանակցութիւններ, բանակցութիւններ և դարձեալ բանակցութիւններ... Ո՞ճրագործ Համիտն իր յաղթական ժպիտը երեսէն վար չի ձգեր եղեր: Որովհետեւ բանակցութիւնները տակաւին մութին մէջ են, ինչպէս և անոնց արդիւնքը. միայն կտրուկ լուրեր, հակասական տեղեկութիւններ են, որ կը պտտին մայրաքաղաքի քաղաքական շրջանակներու մէջ: Յայտնի է սակայն թէ այդ բանակցութիւններու մէջ, որոնք երկարացան ինչպէս սուլթանին քիթը, դժուարութիւններ յարուցանողը այդ Մեծ Մարգասպանն ինքն է իր գոռոզ պահանջներով: Թշուառական անակ յաղթապանծ ձև մ է առած Յունաստանի պարտութիւնէն ի վեր որ կարծես թէ ամբողջ Եւրոպան յաղթած լինէր... Թէեւ այդ ալ մի պարզ գառանցանք է: Այստեղ քաղաքական շրջանակներու մէջ այնպէս կը կարծուի թէ այդ արարածը Եւրոպական թագաւորներէն մէկը իբրեւ գաղտնի պաշտպան և նեցուկ ունենալու է իրեն գոռոզ պահանջներ ընել յանդգնելուն համար: Այդ կասկածին (որն կրնար իրականութիւն ալ համարուիլ) թելադրութեամբ ամենուն աչքերը ուղղւած

են գերմանական կայսեր վրայ: Աերջինս իբր տակաւին զգուշաւոր եղանակաւ կը գործէ եղեր, որովհետեւ կանխածէ եղիւր Նիքոյի կայսրէն: Եթէ այդ ձիշդ է նոր մնոր ենթադրութեանց լաբիւրինթոսին մէջ կորսուելու պարտաւոր են տեղիս եւրոպական ղեւանագէտները, երբ կը տեսնեն որ կախարդ հմայողի մը ազդեցութիւն ունի իւրաքանչիւր Նիքիտովն մեր (աւաղ, տակաւին մեր) օգոստոսիաւ կայսեր քիչ մը ջրոտ ուղեղին վրայ... Աերջապէս բանակցութիւններ և միշտ բանակցութիւններ... վերջը կիմոսանք ամեն բան, վերջը երբ քրիստոսասէր եւրոպական պետութիւններն Արեւելքին ազգավաճառութեան սակարկութիւնն աւարտեն, ապրանքներն իրարու տան և առնեն և խեղճ ազգերուն արիւնջուայ գերեզմանին վրայ արիւնշաղխ խաչ մը տնկեն... Այն ատեն մեր Օրմանեանն երեսը խաչափնքելով, երկիւղածութեամբ և փրկուածի մը սիրտը հանդարտեցնող հառաչանքով մը կորոտայ — «Փառք յաւիտեանս, յաւիտեանց, ամեն»: Օրմանեանի անունը տուի. ներդրութիւն մեղքիս... Այդ մարդը ձիշդ ժամանակին ընտրուեցաւ, այսինքն նշանակուեցաւ իր վեհափառին կամքով: Հայ ազգը դաւաճան մը ունեցաւ որ Յարութիւն կը կոչուէր, գերեզմանափոր մը ունեցաւ որ Աջգետնն էր, այդ գերեզմանին վրայ ողբացող մը ունեցաւ որ Իզմիրլեանն էր և դամբանակոն երախտագրերով թաղող մը ունեցաւ որ Օրմանեանն է: Եթէ ասոնցնայից հիմա մեղի կը մնայ միայն մեռնիլ:

Տեղական վիճակնիս հետեւեալն է: Խիստ հսկողութիւն կայ, ձիււոր և հիտեակ զինուորներ խումբ խումբ կը պտտին փողոցները: Դուրսէն եկած շոգենաւներուն շուրջը գիշեր ցերեկ բազմութիւն ոստիկաններ կը սպասեն, մինչև որ անոնք քաղաքիս առջևէն մեկնին հեռանան: Խալաթիայէն Պոլիս և փոխադարձ պայուսասակով անցնողները կը խուզարկուին և փոքր տուգանքի մըն ալ կը դատապարտուին եթէ պայուսակին համար թէ գլխէն չունին: Ասանկ եթէ երթալու ըլլանք, կը յուսացուի որ Ալլահի և սուլթանի շնորհով նոր օրէնք մ'ալ ունենանք հովանոց կրողներու համար որոնք նոյնպէս պիտի յատուկ թէգլքէրէ մը ունենան ատոր... Ով գիտէ թէ մօտ օր մըն ալ կօշիկներու և գլխարկներու համար ալ չը պիտի այգպիսի օրէնք ստեղծեն ծով գանձարանը լեցնելու նպատակով:

Գաւառներէն թիւրք գաղթականութիւնը գէպի քաղաքս անչափ է: Բոլոր գաղթականներն ալ գրեթէ սովորուած են: Երէկ Թոֆթա մը հայ երիտասարդի մը կը հանդիպի և ըսելով թէ անօթի է՝ քառասուն փառա կը խնդրէ: Թիւրքիոյ նիւթական վիճակն այժմ այն աստիճան անասանելի է դարձած որ թէ քրիստոնէսի և թէ մահմետական ժողովուրդները գրեթէ հաւասարապէս կը զգան այդ:

Պատերազմական մեծամեծ պատրաստութիւնները փութալան կերպով առաջ կը քշէ կառավարութիւնը: Անցեալ շաբթու Սիրքէճիէն երկաթուղիով բազմութիւն զօրք և մեծաքանակ ռազմամթերք ուղարկուեցան գէպի պուլլար-սերպ և թիւրքական սահմանադրուիները: Ինչպէս կերելի յաղթութեան պատճառաւ սուլթանին պայրամն այս տալի սովորականէն աւելի երկար տևեց:

ԱՍՏԸՌ.

ՆԱՍԱԿ ԳԵՅՐՈՒԹԻՅՑ.

2 Յունիսի 18 7.

Սոսկալի կոտորածներէն և այնքան կրած տանջանքներէն ի վեր, որոց մէջ կը խեղդուէին մեր կողմերու հայերն, այժմ ամենուս վրայ տիրած է տեսակ մը մեղութիւն: Կողոպտուած ժողովուրդն այս գարնան միայն սկսաւ քիչ մը ուշքի գալ և իր շուրջը նայելով այժմ միայն խորապէս զգաց թէ ինչ փնտնելու են թարկուեցաւ ինք: Բացի այդ նիւթական խիստ նեղութենէ, կառավարութեան կողմէն լարուած շատ մը մասնաւոր հալածանքներ, նեղութիւններ, բռնութիւններ ամենօրեայ երեւոյթներ են, որոնք նկարագրելն աւելորդ կը համարիմ իբրեւ սովորական դէպքեր: Աննշան, երբեմնապէս ալ յերկրած պատրուակներով ոստիկանութիւնը կը հալածէ և կը բանդարկէ այս կոմայն հայը այլ և այլ գիւղերէն և բանտին մէջ տանջելէ վերջ, իբր առանձին շնորհ մը ըրած ըլլալ կարծակէ... Գիւղացին վերադառնալով տուն՝ ամբողջ կողոպտուած կը տեսնայ, ընտանիք ու զաւակներ յետին թշուառութեան մատնուած... Սարսափելի էին մանաւանդ ձմեռնային ամիսները որք ինչպէս յայտնի է մեր կողմերն սաստիկ են: Այն շնչին օգնութիւնները որ եւրօպական նպաստներէն հասան այս կողմերու գիւղացիներուն մէկ երկու անգամ, թիւրք հարկահաւաք պաշտօնեաներու, ոստիկաններու և մինչև իսկ քուրդերու կողմէ իմացուելով, մօրեկի պէս աղոնք չորս կողմէն կը թափուէին և Եւրօպացիի մէկ տուածի երկուսը կառնէին, կը խլէին այլ և այլ պատրուակներով ու կերթային: Անձամբ լսող մը ինձ կը պատմէր թէ Կարնոյ վալին հայ քանի մը աղաներուն, որոց իր քով էր կանչած զանազան պատճառով, բացարձակապէս խօսած է սպաւէս. «Կեդրոնական կառավարութենէ մասնաւոր հրահանգ կայ չը թողուլ այլ ևս որ հայերը զրամատէր, բարեկեց ըլլան ինչպէս առաջ, վասնզի հարստանալով երես կառնուն և նոյնպէս արգելք կըլլան թիւրք առևտրականներու և ժողովրդի հարստանալուն»: Երբ հայ աղաներէն մին երկիւղած նկատել կուտայ այդ առևտրական նոր քաղաքականութեան մասին թէ՛ «այդպիսի տնօրինութիւններ կրնան փնտսակար ըլլալ նոյն իրեն կառավարութեան գանձի շահերուն և երկրի աղքատութեան նոր պատճառ մը դառնալով», վալին բարկացայտ աչքերով կը պատասխանէ. «Կառավարութեան և երկրին համար ամենէն փնտսակարները հայերն են և անոնց ջնջումը կառավարութեան ամենէն մեծ շահն է»: Ահա նոյն այդ խօսքերուն համաձայն եղանակաւ կը վարուին այժմ մեզ հետ: Զոհն ինկած է դահիճներու ձեռք անպաշտպան: Մեր հարուստները որք այնքան կը խորշէին յեղափոխութենէ, կը կարծեմ այսօր իրենք ալ յեղափոխական պիտի ըլլան եթէ այդ չափի հասկացողութիւն, զգացում, ազնուութիւն և անվեհերութիւն ունին:

Մեր հիւսիսային գաւառները դէպի ռուսական սահմաններն այժմ կը գտնուին կատարեալ պատերազմական վիճակի մը մէջ: Երզնկայի չորրորդ զօրաբանակէն, որ ինչպէս յայտնի է կը գտնուի Սասնոյ և այս կողմերու մինչև Տիգրանակերտ՝ երկայն շարք մը կոտորածներու հերոս Զեքի փաշային ընդհանուր հրամանատարութեան ներքոյ, բազմաթիւ գունդեր են հաւաքուած և կը հաւաքուին շարունակ ռուսական

սահմանագլխին կողմերը: Բազմաթիւ են նմանապէս քիւրդ համախմբներու գունդերը, որք նոյն Զեքիի հրամանատարութեան տակ կը գտնուին, որք կրկին կերթան միենոյն տեղերը: Կեդրոնական կառավարութենէ զրկուած շատ մը ռազմավթերը, թնդանթներ և զէնքեր կը հասնին այս կողմերը: Արդէն կամաց կամաց սկսած են այդ զօրքերու ուտելիքի պաշարները ասդիէն անդիէն հայերէ հաւաքել: Աերջապէս կատարեալ պատերազմական պատրաստութիւններ, որք պատերազմէն ալ գէշ են, վստիկ այն բանակներու չարագործութիւնները տեղական բնակիչներու վրայ այնպէս է, ինչպէս պատերազմով նուաճեալ երկրի մը վրայ:

Այս է մեր ընդհանուր վիճակը որ դիւրին է գուշակել թէ որքան մատաանջութիւններու, կասկածներու և երկիւղներու առիթ կուտայ մեզ մօտալուտ ապագային նկատմամբ: Անտարակուսելի է որ ասոնք ալ սուլթանին հասկցած բարենորոգումներն են. ամենայնոյն թիւրք սրիկան, համախմբ քիւրդն, պարզ զինուորն և ցած պաշտօնեաներէն սկսած մինչև վալին՝ ամենքն այլ ևս իրենց սրբազան իրաւունքը կը համարեն հայը ճանաչել իբրեւ գերի մը որ իրեն պահ է տրուած թուքի, ծեծի, անարգանքի և կողոպտելու համար: Յիւրաքի՛, չըտեսնուած բարենորոգում...

ԼԱՍԱ.

ՆԱՍԱԿ ԳԵՅՐՈՒԹԻՅՑ

Պէյրուի, 15 Մայիս, 1897.

Արդէն ձեզ հաղորդած եմ որ այն օրէն ի վեր, ինչ Նազըմ փաշա կոչուած մարդասպանը հասաւ տեղս իբրեւ վալի, ամեն բան քաղաքիս մէջ ծուռ գնաց: Կարծես թէ մէկէն գեղածիծաղ Պէյրուի օրն ու մթնոլորտը փոխուեցաւ: Ժպիտ մը չը կայ ամեն ազգի քրիստոնեաներու դէմքին, և մասնաւորապէս եւրօպացիներու, որոնք թշուառներուս վարժութիւնը չունին կոտորածներու ենթարկուելու: Այսպիսով օր օրի վրայ Պէյրուի վիճակը տագնապալից կը դառնայ. աղէտներու հօտը կարծես օդին մէջ կը պտտի. սարսափը ներքնապէս սկսած է տիրել ամեն քրիստոնեաներուն: Պէյրուի անհոգ քրիստոնեան, որ միմիայն իր արդ ու գարգին կը նայէր և իր ապրուստի հայթայթման կը մտածէր խաղաղ եղանակաւ, այսօր, առաջին անգամ ըլլալով, սկսաւ զգալ կեանքի անապահովութիւն: Միւսիւլման բնակիչներն ալ զարմանալի կերպով յանդուգն ու լիրբ են դարձած: Ազոնց այդ զրամադրութիւնն արդէն կը պահպանուէր ու կը շարունակի հրահրուիլ Սէրայի գաճաճ Նազըմի կողմէն և թիւրքին յաղթութիւնները — շնորհիւ եւրօպական տէրութիւններու — Յունաստանի դէմ եղած պատերազմին մէջ միւսիւլման խուժանին ներշնչած են շատոնց չի տեսնուած մի ամբարտաւանութիւն ու գրգռում ընդդէմ քրիստոնեաները:

Այս վիճակին մէջ երեւակայեցէք այն որ մարդասպան Նազըմը դարձեալ հանգիստ չի թողուր քրիստոնեաներն և բազմաթիւ ձերբակալութիւններ կընէ և բանտարկել կուտայ, մինչդեռ միւսիւլման յայտնի ռճրագործներ ազատ համարձակ պատելով օդի կը կոնծեն նոյն իսկ Նազըմի քիւրդ տակը և իրենց Մեծ Մարգասպան Պետին կենացը:

Մօտ ապագայ կոտորածի, Պէյրուի մէջ, նա-

խաղաղակ Նշաններ արդէն սկսած են երեւան գալ: Աւագակ Նազըմի Տնարագիտութեան արդիւնքներն այն են, որ Տիմա քրիստոնեաներն գրածով կը գնահատուին ու կը վաճառուին. և արդէն Նազըմի գալէն ի վեր է ինչ այդ գործը սկսած է և բազմաթիւ զոհեր են եղած: Քրիստոնեայի մը կեանքը 1, 2 կամ 3 օսկի կարծէ և ոչ աւելի: Օրինակ մը: Մէկ երկու օր առաջ ճիշդ գորանոցին ստորոտը թուրք սրիկայի մը ձեռքով սպանուեցաւ մի քրիստոնեայ կառապան, որուն արեան գինն էր երեք օսկի, որ վճարած է տեղոյս Նշանաւոր թիւրք Տարուստներէն մին Էյաս անունով: Ամենուն «յայտնի է այստեղ, որ Նազըմը կը հրահանգէ իրենց կրօնականներուն» քարոզներով գրգռել միւսիւսն տարրերը քրիստոնեաները կոտորել:

Առեւտուրը, որ այնքան ընդարձակ էր տեղս, գրեթէ դադարած է: Կառավարութեան կողմէ քրիստոնեայ սրճարանապետներուն խիստ նեղութիւններ կը տրուի: Ամենափոքր շուկով մը քրիստոնեաներն անմիջապէս իրենց խանութները կը գոցեն: Կառավարութիւնը խիստ երկար ժամանակէ ի վեր իր ամեն տեսակ հարկւրաւոր պաշտօններուն որպէս և հազարաւոր զինուորներուն ամսականները չէ տուած և այժմ ալ այդ ամբողջը սխալ է մ' է ըրած, որպէս զի անոնք թելադրուին թէ ուրեմն պէտք է քրիստոնեաները կոզոպտել և Մարդասպան Փատիշահին սնտուկը չը պարպել:

Ահա ի ներկայութեան այսպիսի վիճակի և մօտաւոր աղէտներու իրկիւղէն քրիստոնեաները սկսած են շարունակ գաղթել և գնալ աւելի ապահով երկիրներ հաստատուիլ: Բազմաթիւ եւրօպացիներ ալ արդէն վերադարձած են իրենց երկիրները: Այս գաղթականական հոսանքը կը շարունակուի օր օրի վրայ աւելի խտնութեամբ:

Կ. ԿԱՅԵԱԿ.

Ի Ր Օ Ն Ի Կ Օ Ն

ԵՐԿՈՒ ՈՂՋՈՅՆ.

— Ներկայ ժամանակներս անկման ժամանակներ են ամեն բան քայքայում է, ամեն բան քանդում է ոչինչ այլ ևս իր տեղը չէ. կարծես թէ մարդկային կեանքը մի լծակի վրայ էր, որից շեղել է և այժմ գրելուում է դէպի վիճ: Ո՛չ, ինչ կուղէք ասացէք, բայց իմ խօսքերս ճշմարտութիւններ են...

Այսպէս էր խօսում իմ օտարազգի անուղղելի բարեկամս իմ մէկ ուրիշ նոյնպէս օտարազգի և նոյնպէս անուղղելի բարեկամիս, որ բոլորովին այլ բանի վրայ էր պնդում. —

— Էնց այդ անկման մէջ եմ ես տեսնում համաշխարհային կեանքի վերանորոգումը, և այդ անկումն առհասարակ մարդկային հասարակութեան կեանքի անկում չէ, այլ հին, գոյութեան պատմական իրաւունքը կորցրած կեանքի անկումն է, որ տեղ է տալիս նոր կեանքին:

Արդեօք բնագանցական վիճաբանութեան մէջ չե՞ն ընկներու իմ բարեկամներս, երկմիտ մտածում էի ես՝ ունկնդիր այդ խօսակցութիւններին, երբ առաջին անուղղելի բարեկամս յօնքերը կիտելով հազաց և ասաց մի բան, որ շատ իրական էր:

— Բայց, բարեկամ, դուք չէ՞ք տեսնում, որ այլ և այլ մեծ պետութիւններ բոլորովին անուշադիր են թողնում իրանց հասարակութեան, իրանց ժողովուրդի շահերը, պահանջները, կարծիքներն ու զգացումները, և դարձած մի քանի հազար հաստափորների կօմիտէներ՝ զրանց շահերի պաշտպան են հանդիսանում ամեն տեղ և ամեն մի պարագայում, և հէնց դրանց էլ օգնութեամբ ու օժանդակութեամբ միեւնոյն ժամանակ ոչ մէկ անցք դէպի առաջ, դէպի ինքնորոյն գոյութիւն չեն ուզում տալ փոքրիկ ժողովուրդներին: Տեսէ՞ք ու դիտեցէ՞ք այն, ինչ որ կատարւում է Արեւելքում: Արդեօք հակառակ ու բողբոջ չէ՞ մինչև իսկ ոչ մանրակրկիտ, մինչև իսկ ամենատարրական բարեխղճութեան դէմ այն բոլորն, ինչ որ կատարւում է այժմ Արեւելքում: Ախր ի՞նչ են ուզում, վերջ ի վերջոյ, այն փոքրիկ ազգերը, եթէ ամփոփենք նրանց ձգտումները և նրանց ջանքերը մի խօսքի մէջ: Ազգային գոյութիւն: Եւ ի՞նչ են անում մեր մեծ տէրութիւնները: Նրանք իրանց շահերի հակառակ են տեսնում այդ փոքրիկների ազգային գոյութիւնը: Ես շեշտում եմ, իրանց և ոչ թէ իրանց պատկանած ազգերի՝ շահերի, որովհետև այդ ազգերի արդար զայրոյթն ուրիշ բան չէ պահանջում, եթէ ոչ շուտափոյթ կերպով գոհացում տալ փոքրիկ ժողովուրդների իրաւացի պատմական պահանջներին: Էնց իրանց երկիրների հասարակաց կարծիքի հակառակ է, որ այդ մեծ կառավարութիւնները՝ կղզիացած՝ առաջ են տանում իրանց գործերն ընդդէմ փոքրիկ ազգերի: Դա նոյն բանն է, ինչ որ մայրը կամ հայրն իր որդու բնական աճման ու զարգացման առաջը կտրէր: Եւ դրա պատճառը... Օ՛հ, սատանան տանէ. աշխարհագրական այնպիսի դիրքեր են եղել այդ փոքրիկ ազգերի բնակավայրերը, որ պետութիւններից մէկին կամ միւսին և կամ թէ մէկին, թէ միւսին կարող են շահաւէտ լինել: Եւ այդ գրեթե հաշիւների արդիւնք — ինչ. միլիոնաւոր բազմութեան կոտորած, անմեղ տեղը հոսած արիւն, ազգակործան աւար, կոզոպուտ, պանդխտութիւն, փախուստ, ողնջացում... Միեւնոյն ժամանակ ինչ է անում իր մօտ, իր երկրում, իր տանը նա, այն տէրութիւններից այս կամ այն մէկը: Ներքին քաղաքականութեան խախտւած ընթացք ու անվստահութիւն, մի տեսակ խուլ ու շարունակական բռնութիւն, մի տարօրինակ ու ջնջողային ջանք մահացնել, մեռելութեան քօղը սփռել ընդհանուր հասարակութեան, ընդհանուր ժողովուրդի վրայ, խեղդել նրանց մէջ ուրոյնութեան ու կեանքի վերանորոգման ամեն ձգտում, իջեցնել բարոյական մահերէն թրջ, զբաղեցնել նրա միտքը շինծու, հնարած ու զանազան պատրուակներով, ամեն տեսակ հասարակական ուռուցիկ խնդիրներով և կամ տօներով ու հանդէսներով, որոնց միջոցով շեղել հասարակաց կարծիքը կեանքի տաքնապալի պահանջներից և շարունակել նրան անիմաստ զարծութիւնների պղտոր ջրի մէջ: Պղտոր ջուր: Հարկաւ, որովհետև այդպիսի հանդէսներով ու զարծութիւններով ստորացնելով հասարակութեան միտքը, հարւածելով նրա ինքնուրոյնութիւնը, գրգռելով նրա ստոր բնազդները, նրան դարձնում են մի հնազանդ առէկին տիրապետողների ձեռքը, նրան խաբում են՝ ստրկացնելու համար: Պղտոր ջուր: Հարկաւ, որովհետև հասարակութեան այն ունեւոր խաւերն էլ, որոնք միակնեցուկն են իրանց կառավարութեան, առեւտրի անկման միջոցին ժողովուրդի դրամով իսկ զար-

դարում ու զուգում են ժողովրդին, և տարտիվական գիմակի տակ պարարտացնում իրանց գրպաններն էլ: Այսպես են եղել բոլոր աշխարհահանգեմները: Եւ այսպես կառավարութիւնը, աւելի ճիշդ, նրա ներկայացրած ունեւոր, չարչիւսիրտ դասակարգը չարչիական է դարձնում ամբողջ հասարակութեան սիրտն էլ: Եւ մերկանտիլիզմը, վաշխառութիւնը ծծւել է ամեն կողմ, ամեն խաւերի մէջ, սկսած ամենավերից մինչև ամենավարը: Այսպէս, մի կողմ ուրիշ մանր ազգերին են կոտորել տախս պատմութեան մէջ չը տեսնւած վայրենութեամբ, միւս կողմից խեղդում և կամաց-կամաց սահացնում են իրանց սեփական ժողովրդներին... Ահա քեզ Եւրոպան, այսօրայ Եւրոպան... Ողջոյն նրան, որ մեզ բերում է համաշխարհային մահացումն ու աւերումն...

— Զբո բոլոր ասածների մէջ կայ ճշմարտութեան մեծ բաժին, սկսած միւս բարեկամս. որքան էլ բարի կամք գործածես, անկարելի է հերքել այն բանը և կամ դառնապատ մեղմացուցիչ պարագայ գտնել, որ տերութիւնների ընթացքն Արեւելեան այս վերջին երեք տարւայ տագնապի միջոցին աւելի հակամարդկային, քստմեղի ու ոճրագործական է, քան Մեծ Մարդասպանի գործած սարսափներն անգամ: Ժիշդ է, որ այդ պետութիւնները շարունակ ջանք թափեցին արգելք լինելու փոքրիկ ազգերի թափած հսկայական, հերոսական ճիգերի պսակելուն, ճիգեր, որոնք զարմանալի տոկունութեամբ մղում էին Աղատման ու Զարգացման գաղափարի յաղթութեան համար: Եւրոպական տերութիւնների այդ գործը պատմութեան մէջ հազագիւտ երեւոյթներից մէկն է, որ ամօթի բեռով է ծանրանալու եսասէր անխիղճ քաղաքակիրթ մարդկութեան կրօնքին: Բայց ես ձեր դատողութիւնների միջոց գուրս եմ պահում այն կտորը, որ լուսաբանութեան համար զարմանալի կերպով կը ծառայէ մեզ, իբրև լոյսի շերտ խաւարում: Խնդիրը նրանումն է, որ այդ բոլոր հակամարդկային գործերը կատարւում են կառավարութիւնների և դրանց անմիջական նեցուկ ու տէր՝ յայտնի դասակարգի ձեռքով: Գիտէ՞ք, որ այդ դասակարգն է եւրոպական դրամատէր, սեփականատէր, բուրժուազասակարգը, որն ահագին ֆինանսական ու առևտրական շահերով է կապւած և. Պոլսի ու նրա կառավարութեան հետ: Ահա այդ շահերին էր, որ անմիջական կերպով բաղնեցան փոքրիկ ազգերի ազատական շարժումները: Միևնորն ժամանակ այս վերջինների առջև յանկարծ դերանացան այլ և այլ տերութիւնների յաւակնութիւններն ու ձգտումնարն՝ իրանց իւրացնելու թիւրքիայի կայսրութեան հողը, իբրև համապատասխան գոհացում իրանց պոտմական ու ժամանակակից շահերի: Արեւելեան խնդրի լուծման Գօրգեան հանգույցն այդ երկու դրութեան մէջ էր ամփոփւել: Այդպիսով փոքրիկ ազգերի ազատական ճիգերն ընկան խիստ դժուարաց մի շաւղի վրայ, հաղիպելով քաղաքական այդպիսի հանգամանքների, որոնք միւս կողմից տարօրինակ կերպով բարդում էին պետութիւնների իրար մէջ ունեցած թշնամութիւններով և նրանց իրարից կրած երկիւղով: Այդ հանգամանքներն էին, որոնք մայր եղան մի խորթ զաւակի — Եւրոպական համաձայնութեան: Սա էլ իր կողմից հանդիսացաւ խորթ մայր փոքրիկ ազգերի համար:

— Այդ ամենը խնդրի մի կողմն է, շարունակեց իմ երկրորդ անուղղելի բարեկամս, մինչդեռ ես սպա-

սում էի, թէ ինչպէս պէտք է գայ և յանգէ ու ապացուցանէ իր ամենաաւան յայտարարութիւնը, որ արեց խօսակցութեան սկզբին. — Այդ ամենը խնդրի մի կողմն է... Բայց ուշադրութիւն դարձրէ՛ք, թէ ինչ բան է, որ արթնացրել է դարերով քնացած այդ փոքրիկ ազգերին Արեւելքում: Զէք տեսնում, որ նրանց շարժումները — աջող թէ անաջող, դա խնդիր չէ — փայլուն ապացոյց են, որ մարդկութեան մէջ կեանքը շարունակում է, այսպէս ասած, ապրել, որ մարդկութեան մէջ զարգացման ու առաջադիմութեան ոգին միշտ ընդունում է նորանոր ձևեր, նորանոր ձգտումներ, նորանոր թուիչներ գէպի հէնց այն գաղափարի ու պատմական ձգտումների իրականացումը, որ միակ պայմանն է նրանց, այդ ազգերի, աճման և յետագայ կենսական ու հոգեկան հասունանալուն: Զէք տեսնում, որ մեր, եւրոպական ազգերիս, մէջ էլ ժողովրդի աշխատաւոր ընդհանրութիւնը և դրա հետ մեծամիւլ դասը մասաւոր աշխատաւորների, այսինքն ազատ մասնագէտների, ինչպէս օր. գրագէտ, հրապարակագիր, բժիշկ, ուսուցիչ, երկրաչափ, գեղարուեստագէտ, և այլն, և այլն — երկու սեռին էլ պատկանող — այժմ, իրանց նիւթական, տնտեսական պայմանների շնորհով ու ազդեցութեան տակ, բնական կերպով ձգտում են ու դրած են պատմական մի դերի մէջ՝ իրական դարձնելու մի նոր կեանք իր նոր պայմաններով: Այդ պայմաններն արդէն մարդկային հասարակութեան բնական զարգացման անխուսափելի հետեանք են և ոչ թէ այդ դասակարգի կամքով ստեղծւած մէկ աշխարհ: Դէ ահա հէնց այդ նոր ծագող աշխարհն է, որ այնքան երկիւղ է պատճառում մեր ներկայ բուրժուազական շահասէր կառավարութիւններին, որոնք այդ նոր ծագող մարդկութեան բողբոջները ջանք են անում կտրտել ու թափել՝ ապահովացնելու համար իրանց և իրանց դասակարգի գերիշխանութիւնն ու վայելքները: Այսպէս, դրանց ճիգերը չեն կարող վերջնական կերպով մնասել ժողովրդներին ու դրանց, այլ և այլ տեսակի ու աստիճանի, ազատական ձգտումներին: Սրանք ուշ կամ վաղ կիրագործեն, և կառավարութիւնների ներկայ հակամարդկային գործերը հիւսում են տիրմից ու արիւնից ծեփւած այն պսակը, որով պէտք է պատմութեան մէջ անարգէ ընչաքաղց ու անխիղճ բուրժուազիայի ճակատը: Ահա հէնց այդ աշխարհն է, բուրժուազական թագաւորութիւնը, որ իր հոգեաւրքի միջոցին — տասնեակ ու տասնեակ տարիների ընթացքում — կատարում է իր սև գործը, այդ աշխարհն է, որ կոչւում է թէ՛ իրանից յետոյ թէկուզ ջոհեղեղ, այդ աշխարհն է, ասում եմ, որ ընկնում է մահանալու համար: Եւ թող նա ընկնէ, ողջոյն նոր աշխարհին...

ԹԻԻՐԳԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ.

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ինչպէս յայտնի է, Բ. Դուռը մայիսի վերջերը մի շրջաբերական ուղարկեց Պետութիւնների դեսպաններին, յայտարարելով իր պատրաստակոնութիւնը կարգադրելու ժամանակաւոր զինադադարը, բայց անորոշ թողնելով, թէ խաղաղութեան վերահաստատման համար ինչպիսի սահմանի մէջ է գտնւելու: Կա նոյնպէս ցանկութիւն էր յայտնել խաղաղութեան դաշնը ոտորա-

գրած տեսնել ֆարսալույում: Գեսպանները պատասխանելով, ցոյց տվին զինագազարի արարողութեան ոչ իրականացումը, որ լիովին էջհէմ՝ փաշայի պարտականութիւնն էր՝ համաձայն քաղաքական յայտնի կացութեան. մի և նոյն ժամանակ պահանջ են դրել, որ Բ. Գուռը հարկ եղած հրահանգը տայ վերոյիշած փոշային ենթարկելու զինագազարի խաղաղութեան:

Այդ բանակցութիւններից յետոյ մէկ իրատէ հրապարակեցաւ, որը յայտարարում է, թէ սուլթանը համաձայնել է 15-օրեայ զինագազարի համար, հաշուելով մայիս 20-ից: Այնուհետեւ, այդ ժամանակամիջոցն աւարտելուն պէս տեղի ունեցան նոր բանակցութիւններ և փոխադարձ համաձայնութիւն կայացաւ զինագազար ևս աւելի շարունակել անորոշ ժամանակամիջոցով:

Յոյն կառավարութիւնն իր ժամանակին յատուկ ջրջարեքականներով յայտարարեց իր ներկայացուցիչներին օտար երկիրներում, որ Յունաստանը բանակցութեան գործը յանձնել է մեծ պետութիւններին և պատրաստ է ընդունել նրանց որոշումները:

Հակառակ զինագազարի օրէնքին, թիւրքերը գրաւել են Չօպանատէսի դիրքը: Յոյն կառավարութիւնը խիստ բողոքեց զինագազարի այդ բռնաբարձման դէմ:

Թէսալիայում ժողովրդի թշուառութիւնն աննկարագրելի է: Գիւղերի հաշուեցուցակները և այլ պաշտօնական թղթերը թալանած ու այրած են. հունձքերը և անթիւ ագարակներ կոխկրտած ու ջարդւած են, տաւար ու ոչխար ամբողջովին աւար տարւած: Գարնանային ցանքերն ամբողջութեամբ ձգւած են: Մի քանի հազար փախստականներ ցիրուցան են եղել դէպի կղզիները և յունական գլխաւոր քաղաքները, ուր պահպանուած են բարեգործական ընկերութիւնների հոգատարութեամբ:

Մայիսի վերջերը էջհէմ փաշան հրաման արձակեց, որ յոյն վաճառականները 15 օրեայ ժամանակամիջոցում ետ վերցնեն իրանց ապրանքները Աօլոյի մարտանից: Հրամանակիրը յարում էր, որ պայմանագրով լրանալուն պէս չը վերցւած բոլոր ապրանքները պէտք է գրաւեն թիւրք կառավարութեան կողմից:

Մայիս 29-ին մի հեռագիր հաղորդում էր, որ Մահմետականները Գանդիայից արշաւել են քրիստոնեայ կաթիլիս գիւղի վրայ, այրել այն, սպանել 12 տղամարդ և 2 կին և ապա տարել 40 գլուխ արջառ: Հիւպատոսների բողոքի վրայ Գանդիայի կառավարիչը 12 մահմետականներ է ձեռքառել տեղի: Երկուշաբթի օրը մահմետական ամբոխը հաւաքւելով կառավարական շէնքի առաջ, պահանջեց բանտարկւածների արձակումը: Խուսովութեան երկիւղից՝ միւթէսարը՝ Նրանցից երկուսին ազատ արձակեց: Միւս տասը՝ հսկողութեան տակ՝ ուղարկեց Գանիա: Մահմետականները յորձակել և սպանել են հինգ քրիստոնեայ փողոցում:

Խաղաղութեան բանակցութիւնները սկսեցան յունիս 3-ին Կ. Պօլսում, Թօփհանէի պալատում, վեց ղեկավարների և Թէվֆիք փաշայի միջև: Այդ բանակցութիւնները տևում են մինչև այժմ: Գրանք առայժմ գաղտնի են պահւում. բայց և այնպէս գրեթէ հաստատապէս յայտնի է, որ Անգլիական, Ֆրանսիական ու Իտալական ղեկավարները հէնց սկզբից յայտարարել են թիւրքիային, որ նա պէտք է հրաժարէ Թէսալիայի իւրացման պահանջից: Լուրեր կան, որ իբր

բանակցութիւնների յետագայ նիստերում նոյն եղանակացութեան են հասել նաև միւս երեք պետութիւնների ղեկավարները: Նաև իբր թէ ռուսական ղեկավար Նէլիգօֆն անձնական տեսակցութեան միջոցին սուլթանի հետ, այս վերջինին խորհուրդ տւած լինի թիւրքական ջորքերը ետ կանչել տալ Թէսալիայից: Գեսպաններից մէկին Թէվֆիկ փաշան յայտնել է թէ, իբր թիւրքերի մէջ եղած ազգային զօրաւոր զգացումն արգելք պէտք է լինի սուլթանին Նէլիգօֆի այդ խորհուրդին իրագործելու:

Յոյն կառավարութիւնն Էպիուսից ստացել է պաշտօնական տեղեկութիւններ թիւրք զինւորների այնտեղ կատարած անկարգութիւնների մասին: Բռնաբարձում են կիներ և նրանց պաշտպանող ամուսիններին կամ եղբայրներին անգութ կերպով գանակոծում ու կապտուում են: Չինւորները չարաչար կողոպտել են նաև շատ եկեղեցիներ: Լարիսայի շրջակայքում մահմետական բաշխեզուկներն ամեն տեսակ անկարգութիւններ են առում: Բ. Գուռն, իր սսփրութեան համեմատ, այդ տեղեկութիւնները հերքել է:

Թիւրքերը Թէսալիայում նշանակում գայմագաններ, գատաւորներ և այլ պաշտօնեաներ, մեծ թւով: Բաղմութիւ մահմետական գաղթականներ ամեն օր հասնում են Մակեդոնիայից, ըստ երևոյթին այնտեղ հաստատուելու համար: Թիւրք այլ և այլ պաշտօնեաների հարէմներն արդէն փոխադրւած են այդտեղ:

Անգլիական, Ռուսական ու Իտալական ղեկավարներն իրանց քարտուղարներին ուղարկեցին Թէսալիա տեղեկութիւններ առնելու համար:

Աթէնքում գտնւած փախստականները Թէսալիայից, մի ինդրագրով դիմել են պետութիւններին՝ պղնձեղով, որ թիւրքերի մեկնումը Թէսալիայից անհրաժեշտ է հունձքից առաջ: Այժմ Յունաստան են գտնւում մի քանի հարիւր հազար փախստականներ Թէսալիայից, ամենքն էլ յետին աստիճան թշուառութեան մէջ: Նրանց մէջ մի քանի տեղեր են երևան գալ վարակիչ հիւանդութիւններ:

Մի քանի կրէտացի փախստականներ Սիրիայում յարձակել ու ոչնչացրել են Թաքանակ պաշարեղէններ, որոնք փոխադրւելու վրայ էին մէկ անգլիական շոգենաւի վրայ, որ պէտք է գնար իրեն: Յարձակողները ենթադրել են, այդ պաշարեղէնները յատկացւած են թիւրքական բանակին: Այնուհետեւ յարձակում են գործել նաւի վրայ, բայց ետ են մղւել նաւաստիներից, որոնք գործածել են ռէվոլվերներ:

Համախաղաղութեան քարոզն առաջ է մղւում ժրջան կերպով: Հնդկաստանի այլ և այլ քաղաքներում մահմետականները ժողովներ են գումարում և խնդակցութիւն յայտնում սուլթանին՝ սրա տարած յաղթութեան համար յոյների դէմ:

Օխլուորական յարձակումի կողմից գծւած թիւրքա-յունական սահմանագլխի ռազմական սահմանագրծերի յատկագիծն ընդունւած է կարծւում պետութիւնների կողմից: Ծրագրած սահմանի գիծը չէ պարունակում իր մէջ որ և է գիւղ Թէսալիայից, բայց թիւրքիային տալիս է լեռնային գագաթներ:

Սուլթանը յատուկ նամակներով դիմում է արել ջարին և Գերմանիայի կայսրին՝ պաշտպանել սուլթանի յիշաւունքը: Թիւրքիային միացնելու Թէսալիան: Այդ դիմումը մեծ դժգոհութիւն է առաջացրել միւս չորս պետութիւնների մէջ:

Յոյն կառավարութիւնը բանակցում է Թիւրքիայի հետ գերիներէ փոխադրութեան համար, որոնցից Թիւրքն ունի 230 հոգի, իսկ Յոյնը 200:

Թիւրք Բաշիբոզլուկները պաշտօնական զինազգարից յետոյ այրել էին Գէվրիի գիւղը, Լարիսայի մօտ իսկ թիւրքական բանակը տիրացել էր Թարապսինի, Պալիուրի, Գալաբրեսի և Լիստրո վայրերին, ութ ժամ տարածութեան վրայ իրանց ունեցած դիրքից, զինազարը ստորագրած ժամին: Յոյները բողոքել էին այդ բռնաբարութեան դէմ, բայց թիւրքերը կարեւորութիւն չեն տւել այդ բողոքներին: Բ. Գուռը, դարձեալ իր սովորութեան համաձայն, հերքել էր թէ զինազարը յարգւած է իրանց կողմից:

Թէսալիայում նշանակած Անվէր բէյը հրաման էր արձակել ոչխարահարկը ժողովել այդ երկրում. միւս կողմից յայտարարել էր, որ բացակայ Յոյների գոյքերը պիտի յանձնեն մինչև 15 օր ժամանակամիջոց լրանալը, որից յետոյ պէտք է գրաւեն:

Արտէի վիճակը դարձել է բացարձակապէս անտանելի: Անիայում և Ռէտիմոյում կեանքի և ինչքի ապահովութիւն է տիրում՝ շնորհով եւրօպացիների. բայց Հէրակլիօնում Եւրօպայի կողմից դեռ ոչ մի ոստիկանական պարտականութիւններ չեն հաստատուած: 35,000 մահմետական փախստականներ հաւաքուած են քաղաքում և այդտեղից խմբերով շարունակական յարձակումներ են գործում հարեան գաւառների վրայ, քանդում, աւերում, մարդասպանութիւններ գործում և երբեմն էլ ընդհարումներ ունենում զինուած քրիստոնեայ խմբերի հետ: Արէտացիներն այժմ պաշտօնապէս փափագ են յայտնել համաձայնել մեծ տէրութիւնների առաջարկած ինքնավարութեան Արէտէյում:

ՅԵՄՔԻՆ

(Հետևողութիւն Տուրքենիեյի)

Նուէր Տ. Մ. Ն.-ին (իր գործունէութեան տասնամեակի առիթով).

Հերարձակ ու հրաչեայ աղջիկը մօտեցաւ խորհրդաւոր շէմբին, բաժրացրեց դռան թանձր վարագոյրը և ուզեց ոտքը ներս դնել: Յանկարծ մէկ ահաւոր ձայն որոտաց՝ «Կաց»:

«Կա կանգնեց և նայեցաւ իր շուրջը: Ոչ ոք չեղար: Սակայն իր ետեւը կախարդական էր ամէն բան: Հիանալի էր օրը. լոյսի շողերում կայտառում էին պէսպիսագոյն թիթեռներ: Թռչունները հմայիչ դայլայիկներով փառաբանում էին բնութեան վեհութիւնը, որ ամեն կողմ կեանք էր սփռում ու կենդանութիւն էր արտաշնչում: Ապրել, վայելել — անգիմադրելի-թով այդ իզձը տիրել էր ամենքին, ամեն կողմ:

«Հաշտե՛լ... գողալով վարանեց աղջիկը մի րօպէ: «Ո՛չ» — ալեկոծեց նրա հպարտ սրտում և նա ոտքը դրաւ առնալ:

«Կաց»՝ գոռաց ձայնն աւելի ուժգին:

«Ինչո՞ւ», շնչաց աղջիկը անյայտ տեղից համող ձայնին... Եւ հէնց այդ րօպէին բնութիւնն աւելի պայծառացաւ: Հողի մայրական արգանդից սնւած՝ ծաղկում էին վարդերը, արեւի շողերից կեանք ու գոյն ստացած վարդերը, գայթակղական, ինչպէս կեանքը և թովիչ, ինչպէս սէրը:

Աղջկայ պարզ ճակատը մթադնեց, աչքերի վրայ

իշան արցունքի ցօղերը:

«Կաց, մահկանացու» — նորից խօսեց անյայտ ձայնը — «կեանքը կարճ է և անուշ: Կաց, տկար էակ. կռիւն դժւարին է, և անանցելի է այն ուղին, ուր տանում է այդ շէմբը»:

«Իմ պարտականութիւնը, իմ իղձը, իմ կոչումն է երթալ այդ ուղիով» խօսեց աղջիկը:

«Իայց այնտեղ տիրապետում են մարդասպանները, ոճրագործները և այն ամենն, ինչ դէմ է լոյսի: Այնտեղ են տանջանք, նեղութիւն, յուսահատութիւն»:

Եւ աղջիկը պատասխանեց, —

«Ես ուզում եմ տանել այնտեղ լոյս, ես ուզում եմ իմ տանջանքով ամօքել ուրիշի տանջանքը»:

«Իայց այնտեղ սպասում է նահատակութիւն, այնտեղ կը հոսէ արիւն...»

«Նահատակութիւնը պայմանն է երջանկութեան. արիւնն՝ աղբիւրն է նոր կեանքի», նորից պատասխանեց աղջիկը:

«Գու գիտես արդեօք, որ նրանք, որոնք չունեն քո հողիդ, քեզ չեն հասկանալ, քեզ կը հալածեն, քեզ կը քարկոծեն և կը թունաւորեն քո ամենագեղ ձգտումներդ և սուրբ կոչումդ»:

«Այլ տանեմ այդ խաչն էլ ուսերիս վրայ», հառաչեց աղջիկը:

«Կաց. տկար էակ», բարկացաւ ձայնը. — «Անմիտդ Ոճրագործների թագաւորութեան հիմերն ես ուզում խախտել. դու գիտես, որ չարերը կը պատրաստեն քեզ համար սարսափելի մի պատիժ. կեանքիդ՝ անվերջ տանջանք և մահ՝ անարգական. գուցէ չը խուսափես և քեզ բարձրացնեն կախաղան...»

«Հոգուս աչքերով կը տանեմ և կախաղանի բարձրից 19-րդ դարու շէմբին վրայ, կողոնեմ ես ապագայ դարերը, երազիս իրականութիւնը», ասաց աղջիկը ոգևորուած:

«Այլիւր շէմբն ու ներս անցիր, Գու պատրաստեցիր գերեզմանդ», գուժեց նոյն խորհրդաւոր ձայնը:

«Եւ կեանք՝ ուրիշներին» — կարծես խօսեց չորս կողմից կեանքը վայելող ամբողջ պայծառ բնութիւնը:

Եւ աղջիկն անհեռացաւ վարագոյրի ետեւ...
ԱՐ. 27 Ապրիլ 97. Փ.Փ.

ՊԱՏԱՍԽԱՆ X-ին. — 500 ֆրանկը վերջերս ուղարկւած, ստացանք. իսկ հաղար ֆրանկը, որ ուղարկել էք աւելի առաջ, չենք ստացած: Քննեցէք թէ ինչ է եղել այդ 1,000 ֆրանկի հետ, և խնդրում ենք մեզ տեղեկացնել այդ մասին:

ԻՈՅՍ ՏԵՍԱՐ

Ժ Ր Ա Վ Ի Ր

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՆԵԼԻԱԾ՝ ԲԱՅԱՐԱԿԱՆ ՅՕՐՈՌԱԾՆԵՐ.

ԳԻՆԵ 1 ՖՐԱՆԿ.

Յօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀՆՁԱԿ»-Ի

ԼՕՆԴՕՆ.